ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 02/2026/Վ/Վ
ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԴԵՊՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 09 փետրվարի 2026 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2026 թվականի փետրվարի 2-ին Հանձնաժողով մուտքագրված «Գործընթաց» ՍՊ ընկերության՝ ի դեմս տնօրեն Ինարա Դանիելյանի, դիմումը (այսուհետ՝ Դիմում)՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար - գլխավոր քարտուղար Դավիթ Առաքելյանի կողմից վարքագծի կանոնների, այլ սահմանափակումների առերևույթ խախտումներ թույլ տալու և շահերի բախման առերևույթ դեպքի վերաբերյալ.

ՊԱՐԶԵՑ

1. Ըստ Դիմումով և կից փաստաթղթերով ներկայացված տեղեկատվության՝

1.1 Դիմումի համաձայն՝ Ազգային ժողովի 8-րդ գումարման 11-րդ նստաշրջանի հավատարմագրման համար «Գործընթաց» ՍՊ ընկերության տրված՝ 2025 թվականի դեկտեմբերի 10-ի դիմումը մերժվել է Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղարի՝ 2025 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1/5382-2025 գրությամբ, որը, ըստ Դիմումի, անհիմն և ժամկետանց է:

1.2 Ըստ դիմողի՝ մերժման գրությունը սուբյեկտիվ է և հակասում է նախորդ փուլերում՝ շուրջ 19 տարի թողարկվող «Գործընթաց» հասարակական-քաղաքական, տեղեկատվավերլուծական անկախ երկշաբաթաթերթի լրագրողներին Ազգային ժողովի կողմից հավատարմագրելու պրակտիկային:

1.3 Ըստ Դիմումի՝ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղարը, ով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ է, որոշել է Ազգային ժողովի 8-րդ գումարման 11-րդ նստաշրջանի համար, որն ընդգրկելու է 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք՝ Ազգային ժողովի նախընտրական, ընտրական և հետընտրական փուլերը, թիրախավորել և մերժել իշխանություններին քննադատող, գրաքննության չենթարկվող «Գործընթաց» թերթի լրագրողների հավատարմագրումը: Ըստ Դիմումի՝ Ազգային ժողովի խորհրդի՝ 2024 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ ԱԺԽՈ-062-Լ որոշմամբ հաստատված՝ Ազգային ժողովում լրագրողների հավատարմագրման կարգի 8-րդ կետն իրենց և այլ լրատվամիջոցների նկատմամբ միատեսակ չի կիրառվել և «Գործընթաց» շաբաթաթերթի լրագրողների հավատարմագրումը մերժվել է ընտրովի թիրախավորմամբ, ապա՝ սուբյեկտիվ մեկնաբանմամբ՝ միայն «Գործընթաց» շաբաթաթերթին առաջադրելով կեղծ և խտրական պահանջ՝ անհնար դարձնելով այլ լրագրողների հետ իրավահավասար պայմաններով Ազգային ժողովում հավատարմագրումը:

1.4 Ըստ Դիմումի՝ «Գործընթաց» ՍՊԸ-ի՝ հավատարմագրման դիմումի պատասխանը տրվել է օրենսդրական ժամկետի խախտմամբ՝ հանգեցնելով «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ իր պարտականությունները ժամանակին կատարելու պահանջի խախտման: Բացի այդ, Դիմումի համաձայն՝ մերժման գրությամբ խախտվել են դիմումներին պատասխանելու, գրությունների կազմման կանոնները, ընթացակարգը, խուսափել են «ի պատասխան 10.12.2025թ. «Գործընթաց» թերթի դիմումի» նշումից, ինչը, ըստ դիմողի, արվել է՝ պարտակելու համար հավատարմագրումը մերժող գրության առերևույթ ժամկետանց լինելը: Դիմումի համաձայն՝ այդպիսով խախտվել է «Հանրային ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը:

1.5 Ըստ դիմողի՝ խախտվել է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով սահմանված օրինականության սկզբունքը, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Դավիթ Առաքելյանը թույլ է տվել իր լիազորություններից ու աշխատակազմի գործառույթներից դուրս՝ չգրված «որոշմամբ» հավատարմագրումից զրկում, թույլ է տվել ապօրինություն. մերժման որոշման փոխարեն տրամադրվել է գրություն, այնինչ որոշումը չի կարող լինել նույնական գրությանը: Ըստ այդմ՝ նաև թույլ է տրվել վարչարարության ձևի արատ՝ հղում չկատարելով այն իրավական ակտին ու դրույթին, որի հիման վրա աշխատակազմի ղեկավարն է իրավասու հավատարմագրման իրավունքը մերժել: Բացի այդ, Դիմումի համաձայն՝ ԱԺ աշխատակազմի ղեկավարը կանոնադրորեն չունի որոշում ընդունելու իրավազորություն, այդ թվում՝ լրագրողի հավատարմագրման մերժման մասին:

1.6 Դիմողը նաև նշել է, որ 2025 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1/5382-2025 գրության իրավական անորոշությունը պարզելու համար դիմել է Ազգային ժողովի աշխատակազմի հասարակության հետ կապերի և հաղորդակցության վարչության, իրավաբանական վարչության պետերին, ինչի արդյունքում պարզել է, որ «Գործընթաց» թերթի հավատարմագրումը մերժվել է՝ երկշաբաթաթերթ լինելու հանգամանքով պայմանավորած, քանի որ այն չի համարվել շաբաթաթերթ, ուստի մերժման գրությամբ հղում է կատարվել Ազգային ժողովում լրագրողների հավատարմագրման կարգի 8-րդ կետին, համաձայն որի՝ Ազգային ժողովում կարող են հավատարմագրվել արդարադատության նախարարությունում հաշվառված՝ 1000 և ավելի տպաքանակ ունեցող օրաթերթերի, ամսագրերի և շաբաթաթերթերի, (...) լրագրողները, լուսանկարիչները ու տեսաձայնագրման օպերատորները:

1.7 2025 թվականի դեկտեմբերի 25-ին դիմողը ևս մեկ նամակ է հղել Դավիթ Առաքելյանին՝ խնդրելով հստակեցնել, թե ինչ հիմքով է մերժվել դիմումը: Նամակով պաշտոնյայի ուշադրությունն է հրավիրվել այն փաստերի վրա, որ «Գործընթաց»-ը շարունակել է հրապարակվել իր երկշաբաթյա պարբերականությամբ, ունի Ազգային ժողովում լրագրողների հավատարմագրման կարգով սահմանված բոլոր տվյալները, իսկ ինչ վերաբերում է Ազգային ժողովի աշխատակազմին, ապա կառույցը չի

պահպանել հավատարմագրման համար որոշում կայացնելու սահմանված ժամկետները: Մասնավորապես, համաձայն նշված կարգի 15-րդ կետի՝ դիմումի առնչությամբ որոշումը պետք է ընդունվեր 5 օրում, դրա վերաբերյալ գրառում կատարվեր լրագրողների հավատարմագրման էլեկտրոնային մատյանում և այդ մասին եռօրյա ժամկետում պաշտոնապես տեղեկացվեր լրատվական գործունեություն իրականացնողը: Մինչդեռ, սահմանված ընթացակարգը չի պահպանվել. մերժումն ուղարկվել է դիմումից 12 օր հետո՝ դեկտեմբերի 24-ին, հավատարմագրման ժամկետի վերջին օրը:

1.8 2026թ. հունվարի 5-ին Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը պատասխանել է, որ լրատվամիջոցի՝ սույն որոշման 1.7-րդ կետով նշված դիմումը փաստարկված չէ, և որ «երկշաբաթաթերթ» հասկացությունը չի նույնանում «շաբաթաթերթ» հասկացության հետ:

1.9 2026թ. հունվարի 7-ին Ի.Դանիելյանը գրավոր դիմել է Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանին և ներկայացրել մի շարք առարկություններ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի գործողությունների և հիմնավորումների վերաբերյալ: Նշված դիմումով նշվել է, որ բացի խմբագրության դիմումին պատասխանելու ժամկետի խախտումը՝ Ազգային ժողովը չի կայացրել հավատարմագրման մերժման մասին իրավական ակտ՝ որոշում, այլ վերացական բնույթի գրությամբ տեղեկացրել է, որ «ընդունվել է մերժման որոշում», ինչից պարզ չէ, թե ով է այն ընդունել և ինչ կարգով: Նաև նշվել է, որ լրատվամիջոցների պարբերականությանը վերաբերող տերմինները կամայականորեն են մեկնաբանվել, այն է՝ նշվել է, որ երկշաբաթաթերթը վերոնշյալ պարբերականների տեսակներից ոչ մեկին չի պատկանում, և դա բավարար հիմք է մերժման համար:

1.10 2026թ. հունվարի 8-ին Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը Ի.Դանիելյանին գրավոր տեղեկացրել է, որ խորհրդարանում լրագրողների հավատարմագրումն իրականացվել է Ազգային ժողովում լրագրողների հավատարմագրման հիման վրա, և որ այդ գործընթացում «Ազգային ժողովի կողմից վարչարարություն չի իրականացվում»: Նաև նշվել է, որ լրացուցիչ ուսումնասիրությամբ

պարզվել է, որ հավատարմագրման մերժման գործընթացում սահմանված ժամկետները պահպանվել են:

1.11 Դիմումի համաձայն՝ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն Ազգային ժողովից պահանջել և ստացել է հավատարմագրված զանգվածային լրատվության միջոցների ցանկը, որի ուսումնասիրությունից հետևում է, որ տվյալ ցանկում կան և՛ երկօրյա, և՛ եռօրյա, և՛ այլ պարբերականությամբ տպագիր ԶԼՄ-ներ՝ ինչը վկայում է, որ տարբերակված մոտեցում է ցուցաբերվել հավատարմագրման համար դիմած անձանց նկատմամբ՝ խախտելով հանրային ծառայության օբյեկտիվության սկզբունքը:

1.12 «Գործընթաց» երկշաբաթաթերթի թիրախավորման պատճառների առնչությամբ Դիմումով նշվել է, որ խնդիր ունեն իշխանությանը քննադատողներին Ազգային ժողովում հնարավորինս կրճատելու՝ այդկերպ դյուրացնելու հարազատ կուսակցության անցողիկությունը: Դիմումի համաձայն՝ լրատվամիջոցների աշխատանքի և տեսաձայնագրությունների տիրույթի հետ կապված սահմանափակումների նախատեսման հետևանքով շատ լրատվամիջոցներ խուսափում են ԱԺ-գործադիր հարցուպատասխանի նիստերի ժամին գալուց կամ հեռանում են Ազգային ժողովից՝ այդ ժամը սկսվելուն պես: Ըստ դիմողի՝ իրենք չեն խուսափել այդ նիստերը լուսաբանելուց, ինչի մասի նԱզգային ժողովի աշխատակազմի ղեկավարը գիտեր, և հիմա, երբ նախընտրական փուլում առավել մեծ է հավանականությունը, հատկապես՝ ԱԺ-գործադիր հարցուպատասխանի նիստերին արձանագրված կոնֆլիկտների աճի, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը հավատարմագրման մերժմամբ նպատակ է ունեցել կրճատել խստացված ռեժիմի նիստեր լուսաբանող, անկախ, քննադատող, չգրանցվող լրատվամիջոցների թիվը:

1.13 Ըստ Դիմումի՝ հանրային, պաշտոնական պարտականության և կուսակցական շահի միջև կոնֆլիկտում Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը շեղվել է լրագրողին հավատարմագրելու նպատակից՝ այն դիտարկելով ոչ թե կառույցի թափանցիկության ապահովման միջոց, այլ քաղաքական շահի տրամաբանությամբ՝ իրեն և իշխանությանը քննադատող «Գործընթաց» անկախ թերթի լրագրողներին

դուրս թողնելով Ազգային ժողովի 8-րդ գումարման 11-րդ նստաշրջանի լուսաբանումից: Ըստ այդմ, ըստ Դիմումի՝ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը խախտել է «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը:

1.14 Ըստ Դիմումի՝ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը խախտել է նաև «Հանրային ծառայության մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ իր պաշտոնեական (ծառայողական) դիրքի օգտագործմամբ փաստացի առավելություններ կամ արտոնություններ ապահովելով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համար: Դիմումի համաձայն՝ Դ.Առաքելյանը, համախոհությամբ իր քաղաքական ու կուսակցական վերադասի հետ, հենց միակուսակցական ջանքերով մշակված և ընդունված իրավական ակտերով, փաստաթղթերով սահմանափակել է՝ հատկապես ԱԺ-Կառավարություն հարցուպատասխանի նիստերին լրատվամիջոցների թե2 աշխատանքի, թե2 տեսաձայնագրումների տիրույթը՝ հասցնելով նվազագույնի:

1.15 Դիմումով ներկայացվել են հետևյալ պահանջները՝

1.15.1 Դիմումի հիման վրա հարուցել վարույթ՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքի 27-րդ հոդվածի համաձայն:

1.15.2 Քննել և լուծել Դավիթ Առաքելյանի վարքագծի կանոնների և այլ սահմանափակումների խախտումը, շահերի բախման իրավիճակը: Դիմումով պահանջնվել է, որ քննության արդյունքում չեղարկվի 2025 թվականի դեկտեմբերի 24-ի՝ «Գործընթաց» թերթի լրագրողների հավատարմագրումը մերժող գրությունը և «Գործընթաց» թերթի լրագրողներ Ինարա Դանիելյանին և Իրինա Դանիելյանին Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղարը ողջամիտ ժամկետում տրամադրի Ազգային ժողովի 8-րդ գումարման 11-րդ նստաշրջանի հավատարմագրերը՝ այդկերպ վերականգնելով վերջիններիս խախտված իրավունքը:

1.15.3 Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Դավիթ Առաքելյանին ենթարկել պատասխանատվության վերոնշյալ խախտումների համար:

1.15.4 Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղարին ներկայացնել համապատասխան առաջարկություններ, որոնք վերաբերում են Ազգային ժողովում լրագրողների հավատարմագրման կարգին, մասնավորապես առաջարկվում է՝

1.15.4.1 համապատասխանեցնել օգտագործվող հասկացությունները, մասնավորապես՝ Ազգային ժողովում լրագրողների հավատարմագրման կարգի 8-րդ կետում նշված «օրաթերթերի, ամսագրերի և շաբաթաթերթերի» բառերի փոխարեն նշել «նյութական կրիչի վրա թողարկված պարբերական»: Մշակել և կիրառել զանգվածային լրատվության միջոցների հավատարմագրման ձևաթուղթ՝ դրանում նշելով լրատվամիջոցների տեսակները՝ ըստ «Զանգվածային լրատվության մասին» օրենքի:

1.15.4.2 հրապարակել հավատարմագրված լրատվամիջոցների ցանկը:

1.15.4.3 Ազգային ժողովում լրագրողների հավատարմագրման կարգից հանել «որոշում է ընդունվում» անորոշ ձևակերպումը: Նույն կարգից հանել լրագրողին նախազգուշացում տալու կամ հավատարմագրումը դադարեցնելու դրույթը: Նույն կարգի դրույթները համապատասխանեցնել լրագրողներին հավատարմագրման օրինակելի կարգի դրույթներին:

1.15.4.4 չեղարկել Ազգային ժողովի նախագահի 2021 թվականի հուլիսի 30-ի ՆՈ-63-Լ որոշման 5-րդ կետը, ինչպես նաև այն դրույթները, որոնց հիմքով միայն Ազգային ժողովում զանգվածային լրատվության միջոցների դեմ կիրառվում են անհիմն սահմանափակումներ:

1.16 Դիմումին կից ներկայացվել են «Գործընթաց» թերթի կողմից լրագրողների հավատարմագրման՝ 2025 թվականի դեկտեմբերի 10-ի դիմումի բնօրինակի լուսապատճենը, նշված դիմումի՝ 2025 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1/5382-2025 պատասխան գրությունը, «Գործընթաց» թերթի՝ 2025 թվականի դեկտեմբերի 25-ի և 2026 թվականի հունվարի 7-ի գրությունները, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի՝ 2026 թվականի հունվարի 5-ի թիվ 1/5-2026 գրությունը և 2026 հունվարի 8-ի թիվ 1/39-2026 գրությունը, լրագրողներ Իրինա Դանիելյանին և

Ինարա Դանիելյանին առ 30.12.2025թ. տրված հավատարմագրերի լուսապատճենները, ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության՝ 2026 թվականի հունվարի 19-ի թիվ /25.2/2198-2026 գրությունը, Ազգային ժողովի հասարակայնության հետ կապերի և հաղորդակցության վարչության աշխատակցի հետ հեռախոսային խոսակցության թվային ավտոմատ ձայնագրային ապացույցը, «Գործընթաց» թերթի թիվ 392 համարի 1-ին էջի և թիվ 393 համարի 8-րդ էջի լուսապատճենները, Ազգային ժողովի նախագահի՝ 2024 թվականի դեկտեմբերի 3-ի հրավերը, Ազգային ժողովի նախագահի մամուլի քարտուղարի՝ 2024 թվականի դեկտեմբերի 4-ի ծանուցման էկրանապատկերը և վերջինիս հետ 2024 թվականի դեկտեմբերի 6-ի հեռախոսազանգի թվային ավտոմատ ձայնագրությունը, Ազգային ժողովի հասարակայնության հետ կապերի և հաղորդակցության վարչության էլեկտրոնային փոստից ուղարկված՝ 2026 թվականի հունվարի 16-ի ծանուցման էկրանակադրը, «Գործընթաց» թերթի պաշտոնական էլեկտրոնային փոստից նշված ծանուցմանն ի պատասխան ներկայացված՝ 2026 թվականի հունվարի 16-ի նամակի էկրանակադրը, Դիմումով վկայակոչված՝ Դավիթ անունով անձի նկարը:

2. Դիմումով, կից փաստաթղթերով ներկայացված և դրանց ուսումնասիրության ընթացքում ձեռք բերված փաստական հանգամանքները և դրանց հիմքով վարույթի հարուցումը մերժելու հիմնավորումները

2.1 ՀՀ ազգային ժողովի նախագահի 2023 թվականի փետրվարի 3-ի Կ-30-Ա կարգադրությամբ՝ Դավիթ Առաքելյանը նշանակվել է Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար - գլխավոր քարտուղարի պաշտոնում:

2.2 2026 թվականի փետրվարի 4-ին՝ ժամը 16:01-ին, ՀԾՎՎ վարչության աշխատակիցը դիմողի հետ հեռախոսազրույցով նրանից հայցել է Դիմումով վկայակոչված՝ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեին Ազգային ժողովի կողմից տրամադրված՝ հավատարմագրված լրատվամիջոցների ցանկը: Ի.Դանիելյանը

նշել է, որ ինքը ցանկը չունի, սակայն կարող է այն ստանալ կոմիտեի նախագահից և ներկայացնել:

2.3 2026 թվականի փետրվարի 4-ին, ի լրումն Դիմումի, «Գործընթաց» ՍՊԸ-ից ստացված գրությամբ Հանձնաժողովին տեղեկացվել է, որ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ Աշոտ Մելիքյանը խնդրել է, որ Հանձնաժողովի կողմից պահանջվող՝ հավատարմագրված լրատվամիջոցների ցանկը ստանալու առթիվ Հանձնաժողովը դիմի իրեն՝ ներկայացնելով Ա.Մելիքյանի էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը: Նույն գրությամբ Ի.Դանիելյանը հայտնել է, որ 2026 թվականի փետրվարի 3-ին ստացել են Դիմումի առարկայի վերաբերյալ Տեղեկատվական վեճերի խորհրդի փորձագիտական կարծիքը, որը ևս ներկայացվել է Հանձնաժողովին:

2.4 Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի՝ 2026 թվականի փետրվարի 4-ի թիվ 01/282-2026 գրությամբ Ա.Մելիքյանից հայցվել է ԱԺ-ում հավատարմագրված լրատվամիջոցների ցանկը, որը Հանձնաժողովին է ներկայացվել 2026 թվականի փետրվարի 5-ին:

2.5 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«3. Պետական պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական:»:

2.6 Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն.

«4. Պետական վարչական պաշտոններն են (...) Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, (...) պաշտոնները:»

2.7 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն.

«1. Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնները

սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով:

(...)

3. Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պարտավոր են պահպանել սույն օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները:

(...)»:

2.8 Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին արգելվում է՝

(...)

3) իր պաշտոնեական (ծառայողական) դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների համար փաստացի առավելություններ կամ արտոնություններ ապահովելու համար.

(...):»:

2.9 Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

«1. Շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա:

2. Պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը ներառում է որևէ արտոնություն իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այն անձանց կամ կազմակերպություններին, որոնց հետ ինքը կամ իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար, քաղաքական կամ այլ գործնական կամ անձնական հարաբերություններ: Գործարար հարաբերությունները ներառում են տնտեսական, տնտեսավարման կամ գործարքներից ծագող ցանկացած հարաբերություններ, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել օգուտների ստացման այդ հարաբերությունների մասնակիցների կամ նրանցից որևէ մեկի համար: Քաղաքական հարաբերությունները ներառում են որևէ կուսակցության մասնակցության կամ տվյալ կուսակցության այլ անդամների հետ

ունեցած գործարար կամ այլ գործնական կամ անձնական կապի ուժով ծագող հարաբերությունները:»:

2.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Հանձնաժողովի գործառույթներն են՝

1) պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանմանը հետևելը.

1.1) պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների, և շահերի բախման կարգավորումների պահպանմանը հետևելը: Սույն կետի փակագծերում նշված բացառությունը չի տարածվում քննչական կոմիտեի և հակակոռուպցիոն կոմիտեի (այսուհետ միասին՝ քննչական մարմիններ) ղեկավարների, նրանց տեղակալների և գլխավոր դատախազի տեղակալների վրա.

(...):»:

2.11 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«*1. Հանձնաժողովը՝*

1) քննում և լուծում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների,

ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վերաբերյալ դիմումներ: Սույն կետի փակագծերում նշված բացառությունը չի տարածվում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների և գլխավոր դատախազի տեղակալների վրա: Հանձնաժողովը չի քննում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների կողմից վարքագծի կանոնների խախտման և շահերի բախման դեպքերի վերաբերյալ գործերը, եթե դրանք առնչվում են նրանց՝ որպես քրեական վարույթի հանրային մասնակից հանդես գալու ընթացքում կատարած արարքին: Հանձնաժողովը չի քննում գլխավոր դատախազի տեղակալների կողմից վարքագծի կանոնների խախտման և շահերի բախման դեպքերի վերաբերյալ գործերը, եթե դրանք առնչվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 176-րդ հոդվածով սահմանված լիազորությունների իրականացման շրջանակում կատարած արարքին.

2) իրավասու մարմնին կամ պաշտոնատար անձին ներկայացնում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների, ինչպես նաև շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկություններ (այդ թվում՝ պաշտոն զբաղեցնող անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ).

(...):»:

2.12 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի համաձայն.

«1. Վարույթ կարող է հարուցվել՝

1) յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա, իսկ քննչական մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների դեպքում՝ նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի դիմումի հիման վրա.

(...)

2. Հանձնաժողովը պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների առերևույթ խախտումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտումների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների, կամ շահերի բախման առերևույթ դեպքերի առկայության պարագայում հարուցում է համապատասխան վարույթ: Սույն մասի փակագծերում նշված բացառությունը չի տարածվում քննչական մարմինների ղեկավարների, նրանց տեղակալների և գլխավոր դատախազի տեղակալների վրա:

(...)»:

2.13 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 30-րդ հոդվածի համաձայն.

«1. Դիմումը վերադարձնելու կամ վարույթի հարուցումը մերժելու մասին Հանձնաժողովն ընդունում է որոշում դիմումն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

(...)

3. Հանձնաժողովը մերժում է վարույթի հարուցումը, եթե՝

1) դիմումի ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ առկա չեն վարույթ հարուցելու հիմքեր.

2) դիմումում բարձրացված հարցերը դուրս են Հանձնաժողովի իրավասությունից.

3) սույն օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում դիմումը ներկայացրել է ոչ շահագրգիռ անձը.

4) նույն անձի վերաբերյալ նույն հիմքով առկա է Հանձնաժողովի եզրակացություն:

4. Սույն հոդվածով նախատեսված որոշումները եռօրյա ժամկետում ուղարկվում են դիմողին:»:

2.14 Հանձնաժողովի՝ 2024 թվականի փետրվարի 6-ի «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը սահմանելու մասին» N 02-Ն որոշմամբ ընդունվել և 2024 թվականի ապրիլի 1-ից ուժի մեջ է մտել համապատասխան կանոնագիրքը (այսուհետ՝ Կանոնագիրք):

2.15 Կանոնագրքի 1-ին կետի համաձայն.

«1. (...) կանոնագիրքը հանրային ծառայության վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնների համախումբ է, որով պետք է առաջնորդվեն համապատասխան պաշտոն զբաղեցնող անձինք:»:

2.16 Կանոնագրքի 11-րդ կետի համաձայն.

«11. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը ծառայողական պարտականությունները կատարելիս պարտավոր է գործել իրավունքի գերակայության սկզբունքին, օրենքի ոգուն և տառին համապատասխան, հարգել ու պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սահմանադրական օրենքները, օրենքները, Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերը, Կանոնագիրքը, իրավական այլ ակտերը և գործել դրանց համապատասխան՝ օրինակ ծառայելով իրեն ենթակա հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց, հանրային ծառայողների և այլ աշխատողների համար:»:

2.17 Կանոնագրքի 58-րդ կետի համաձայն.

«58. Հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է բացառել խտրական վերաբերմունքի դրսևորում որևէ կազմակերպության, խմբի կամ անհատի նկատմամբ՝ կապված նրա սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների հետ:»:

Վերոնշյալ իրավակարգավորումների համատեքստում քննարկելով Դիմումով ներկայացված փաստական հանգամանքները՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Դիմումի համաձայն՝ «Գործընթաց» թերթի լրագրողների՝ Ազգային ժողովում հավատարմագրումը մերժելով՝ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանը գործել է շահերի բախման իրավիճակում և թույլ է տվել այլ սահմանափակման խախտում, քանի որ, ըստ դիմողի, առաջնորդվել է ոչ թե կիրառելի օրենսդրությամբ, այլ կուսակցական շահերով: Դիմողը, մասնավորապես, գտել է, որ նշված որոշման արդյունքում Դ.Առաքելյանը փաստացի արտոնություն է ապահովել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համար:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասից բխում է, որ շահերի բախում կարող է արձանագրվել միայն այն դեպքում, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդել են կամ կարող էին ազդել նրա պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա: Ընդ որում, նույն հոդվածի 2-րդ մասով մասնավոր շահը բնութագրվում է որպես պաշտոնատար անձին կամ այլ անձանց տրամադրվող **արտոնություն:**

Նմանապես, Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանվող այլ սահմանափակման վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ դրանով արգելվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից իր պաշտոնեական դիրքը կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների համար **փաստացի առավելություններ կամ արտոնություններ** ապահովելու համար:

Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրում է, որ ինչպես վկայակոչված այլ սահմանափակման առերևույթ խախտման, այնպես էլ շահերի բախման առերևույթ իրավիճակի առկայության համար պարտադիր է, որ հիմնավորվի հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից իրեն կամ Օրենքով սահմանված երրորդ (փոխկապակցված) անձանց **արտոնության** (այլ սահմանափակման դեպքում՝ արտոնության կամ առավելության) տրամադրումը:

Թեև «Հանրային ծառայության մասին» օրենքը գործող խմբագրությամբ չի սահմանում «արտոնություն» եզրույթի սահմանումը, այնուամենայնիվ, Հանձնաժողովը նշված եզրույթի մեկնաբանմանն անդրադարձել է 2025 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 03/2025/Շ/Վ եզրակացությամբ՝ արձանարգելով հետևյալը.

«(...) պաշտոն զբաղեցնող անձի՝ իրեն կամ իր հետ փոխկապակցված անձին որևէ արտոնության տրամադրումը կարող է արտահայտվել անձի պաշտոնեական պարտականություններն իրականացնելիս այնպիսի գործողություն կատարելու կամ որոշում ընդունելու (այդ թվում՝ կոլեգիալ մարմնի կազմում որոշում ընդունելուն մասնակցելը) մեջ, որը թեև ինքնին օրինական է, սակայն հանգեցնում կամ նպաստում է՝

1. իր կամ իր հետ փոխկապակցբած անձի գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

2. իր կամ իր հետ փոխկապակցված անձի անդամակցած ոչ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

3. իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպութան գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

4. իր հետ փոխկապակցված անձին պաշտոնում նշանակմանը:»:

Հանձնաժողովը գտնում է, որ Դիմումով ներկայացված փաստական հանգամանքներով որևէ կերպ չի հիմնավորվում, թե «Գործընթաց» թերթի լրագրողների հավատարմագրման մերժումը ինչպես է բարելավել Դ.Առաքելյանի կամ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության գույքային կամ իրավական դրությունը կամ ստեղծել որևէ այլ առավելություն: Հանձնաժողովը գտնում է, որ նշված

գործողությամբ իրավական հետևանքներ են առաջացել միայն «Գործընթաց» թերթի լրագրողների համար, որոնք իրենց բնույթով ոչ բարենպաստ են եղել: Ըստ այդմ, Հանձնաժողովի գնահատմամբ, Դիմումով չեն ներկայացվել բավարար փաստեր, որոնք կհիմնավորեին «Գործընթաց» թերթի լրագրողների հավատարմագրման մերժմամբ Դ.Առաքելյանի կողմից այլ սահմանափակման առերևույթ խախտման առկայությունը կամ շահերի բախման առերևույթ իրավիճակում գործելը:

Ըստ այդմ՝ Դիմումն այս պահանջների մասով ենթակա է մերժման՝ հաշվի առնելով, որ առկա չեն այլ սահմանափակման առերևույթ խախտման հատկանիշներ կամ շահերի բախման առերևույթ իրավիճակ:

Ինչ վերաբերում է վարքագծի կանոնների առերևույթ խախտմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Դիմումով բարձրացվել են վարչարարության շրջանակներում Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի կողմից օրենքով սահմանված ժամկետների և ձևական պահանջների խախտման, կամայականություն և ոչ միատեսակ մոտեցում, ինչպես նաև խտրական վերաբերմունք դրսևորելու հարցերը:

Հանձնաժողովը Կանոնագրքի 11-րդ կետին համապատասխանության տեսանկյունից հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագիծը քննարկելու իր իրավասության շրջանակին անդրադարձել է 2025 թվականի ապրիլի 4-ի թիվ 04/2025/Վ/Վ որոշմամբ՝ արձանագրելով.

«(…) Հանձնաժողովն ընդգծում է, որ պարտականությունների պատշաճ կատարումն ինքնին վարքագծի կանոններից առանձին՝ ծառայողական կարգապահությանն առնչվող պարտականություն է: Ընդ որում, որոշ դեպքերում վարքագծի կանոնների խախտումը կարող է դրսևորել նաև պարտականությունների չկատարմամբ կամ ոչ պատշաճ կատարմամբ, սակայն պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման բոլոր դեպքերը չեն, որ պարունակում են վարքագծի կանոնի խախտում:

(…)

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Կանոնագրքի 11-րդ և 14-րդ կետերը պետք է մեկնաբանվեն այնպես, որ դրանց խախտման համատեքստում դիտարկվեն երկու տեսակի վարքագծի դրսևորումներ, մասնավորապես՝ խոսքային կամ ոչ խոսքային բնույթի վերաբերմունքով իրավունքի գերակայության, ՀՀ օրենսդրության նկատմամբ հարգալիր վերաբերմունք առերևույթ չդրսևորելու դեպքերը (օրինակ՝ հրապարակային խոսքում անօրինական վարքագիծն արդարացնելը, որը կարող է ընկալվել որպես հակաօրինական գործունեության նկատմամբ հանդուրժողականություն և հետևաբար՝ իրավունքի գերակայության նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորում), ինչպես նաև լիազորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը, որը միաժամանակ հանգեցնում է վարքագծի սկզբունքների կամ Կանոնագրքով նախատեսված որևէ այլ կանոնի խախտման: Այլ խոսքերով, պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որը չի հանգեցրել Կանոնագրքի որևէ այլ նորմի խախտման կամ իրավունքի գերակայության, ՀՀ Սահմանադրության, այլ օրենսդրական ակտերի նկատմամբ առերևույթ անհարգալից վերաբերմունքի դրսևորման, ինքնին չի կարող դիտարկվել Կանոնագրքի 11-րդ և 14-րդ կետերի համատեքստում և առնչվում է առավելապես ծառայողական կարգապահությանը, այլ ոչ թե բարեվարքության համակարգին:»:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովն ընդգծում է, որ պաշտոնատար անձի կողմից պարտականությունների ոչ պատշաճ կատարումը, այդ թվում՝ ոչ պատշաճ կամ ոչ իրավաչափ վարչարարության իրականացումը, Կանոնագրքի համատեքստում կարող է դիտարկվել միայն այն դեպքում, եթե հանգեցրել է Կանոնագրքով նախատեսված այլ կանոնների կամ վարքագծի սկզբունքների խախտման: Հակառակ պարագայում՝ վարչարարության իրավաչափությունը, այդ թվում՝ վարչարարության հիմնարար սկզբունքների պահպանումը կարող է քննության առնվել միայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով՝ վերադասության կարգով վերանայման կամ վարչական կամ դատական կարգով բողոքարկման դեպքում:

Ըստ այդմ, **Հանձնաժողովն արձանագրում է, որ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի կողմից պատշաճ վարչարարության իրականացումն ինքնին չի կարող հանդիսանալ Հանձնաժողովի կողմից Կանոնագրքի 11-րդ կետի խախտման համատեքստում քննարկման առարկա, և կարող է Հանձնաժողովի կողմից քննարկվել միայն այն դեպքում, եթե հանգեցրել է Կանոնագրքի այլ կանոնների կամ վարքագծի սկզբունքների խախտման, այլ խոսքերով՝ ունի էթիկական ասպեկտ:**

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում քննարկելու Դիմումով ներկայացված արարքում Կանոնագրքի 58-րդ կետի առերևույթ խախտման հատկանիշների առկայությունը: Կանոնագրքի 58-րդ կետով, մասնավորապես, նախատեսվում է խտրական վերաբերմունքի արգելքը՝ կապված կազմակերպության, անձանց խմբի կամ անհատի սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների հետ:

Դիմումով նշվել է, որ Ազգային ժողովում լրագրողների հավատարմագրման կարգի 8-րդ կետով նախատեսված «օրաթերթ, ամսագիր կամ շաբաթաթերթ» լինելու պահանջը տառացի է կիրառվել միայն «Գործընթաց» թերթի նկատմամբ, և նման մոտեցման դեպքում մի շարք թերթեր, որոնք երկօրյա կամ եռօրյա պարբերականությամբ են թողարկվում, ևս պետք է չհավատարմագրվեին, սակայն Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեին Ազգային ժողովի կողմից տրամադրված՝ հավատարմագրված լրատվամիջոցների ցանկում դրանք ներառված են: Դիմումով նշվել է, որ նման որոշումն ունի մի քանի պատճառ՝ նշելով, որ «ունեն խնդիր իշխանությանը քննադատողներին ԱԺ-ում հնարավորինս կրճատելու՝ այդկերպ դյուրացնելու հարազատ կուսակցության անցողիկությունը»: Բացի այդ, Դիմումով նշվել է, որ երբ Ազգային ժողովում լրագրողների գործունեության հետ կապված սահմանափակումների կիրառման հետևանքով շատ լրատվամիջոցներ խուսափում են

ներկա գտնվել Ազգային ժողովի և Կառավարության միջև հարցուպատասխանի նիստերին և հեռանում են Ազգային ժողովից նշված նիստերի շրջանում: Նշվել է, որ «Գործընթաց» թերթը չի խուսափել լուսաբանել նշված նիստերը, ինչի մասին գիտեր Դ.Առաքելյանը և նախընտրական փուլում, երբ առավել մեծ է կոնֆլիկտների աճի հավանականությունը, Դ.Առաքելյանը նպատակ է ունեցել «Գործընթաց» թերթի լրագրողների հավատարմագրման մերժմամբ կրճատել հենց այդ նիստերը լուսաբանող, անկախ, քննադատող, չգրաքննվող զանգվածային լրատվության միջոցների թիվը:

Վերոգրյալի հիման վրա՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Դիմումի համաձայն՝ «Գործընթաց» թերթի նկատմամբ դրսևորվել է խտրական վերաբերմունք՝ պայմանավորված նշված թերթի կողմից քաղաքական իշխանությանը քննադատող նյութերի հրապարակմամբ:

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ Աշոտ Մելիքյանի կողմից Հանձնաժողովին ներկայացված՝ Ազգային ժողովի 8-րդ գումարման 11-րդ նստաշրջանի աշխատանքների լուսաբանման համար հավատարմագրված զանգվածային լրատվության միջոցների ցանկի ուսումնասիրմամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ դրանում ներառված են, ի թիվս այլնի, «5-րդ ալիք» հեռուստաընկերությունը, «Aysor.am» լրատվական կայքը, «Հրապարակ» օրաթերթը, «NEWS.am» լրատվական կայքը, «24news.am» լրատվական կայքը, «Ժողովուրդ» օրաթերթը և մի շարք այլ լրատվամիջոցներ, որոնց հրապարակումների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ դրանք ևս կատարում են քաղաքական իշխանություններին քննադատող բնույթի բազմաթիվ հրապարակումներ, այնուամենայնիվ, դրանց հավատարմագրումը չի մերժվել:

Հանձնաժողովը, ըստ այդմ, գտնում է, որ Դիմումի ուսումնասիրության շրջանակներում ձեռք չեն բերվել բավարար փաստական հանգամանքներ, որոնք առերևույթ կերպով հիմնավորեին, որ արտահայտված քաղաքական դիրքորոշումների կամ քաղաքական իշխանությունների նկատմամբ քննադատական նյութերի հրապարակման հանգամանքով պայմանավորված՝ Ազգային ժողովի աշխատակազմի

ղեկավարը հավատարմագրման համար դիմում ներկայացրած լրագրողների նկատմամբ դրսևորել է տարբերակված վերաբերմունք: Ընդ որում, Դիմումով չեն ներկայացվել փաստեր, որոնք կհիմնավորեին նաև որևէ այլ անձնական կամ սոցիալական բնույթի հատկանիշի հիմքով առերևույթ խտրական վերաբերմունքի դրսևորման հանգամանքը:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովը գտնում է, որ Դիմումով նկարագրված արարքները չեն հանգեցրել Կանոնագրքի 58-րդ կետի առերևույթ խախտման, ըստ այդմ՝ չեն կրում էթիկական բնույթ և չեն կարող քննարկվել նաև Կանոնագրքի 11-րդ կետին համապատասխանության համատեքստում, քանի որ նման դեպքում Հանձնաժողովը ստիպված կլինի ստանձնել վերադաս վարչական ատյանի դեր՝ քննարկելով իրականացված վարչարարության իրավաչափությունը և պատշաճությունը, այդ թվում՝ դրա շրջանակներում կամայականության արգելքի խախտման հարցը, ինչը Հանձնաժողովի լիազորությունների շրջանակից դուրս է:

Ըստ այդմ՝ Դիմումն այս պահանջի մասով ևս ենթակա է մերժման՝ հաշվի առնելով՝ որ առկա չեն վարքագծի կանոնների առերևույթ խախտման հատկանիշներ և Դիմումով բարձրացված հարցերի քննությունը դուրս է Հանձնաժողովի իրավասության շրջանակից:

Ինչ վերաբերում է Դիմումով ներկայացված մյուս պահանջներին՝ կապված Հանձնաժողովի կողմից Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղարին առաջարկություններ ներկայացնելու պահանջին, Հանձնաժողովն ընդգծում է, որ դրանց բովանդակությունից բխում է, որ դրանք վերաբերում են Ազգային ժողովում զանգվածային լրատվության միջոցների գործունեությանը, այդ թվում՝ հավատարմագրման գործընթացի առնչությամբ դիմումատուի կողմից վեր հանված օրենսդրական բացերի և թերությունների կարգավորմանը: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի վերլուծությունից հետևում է, որ Հանձնաժողովն իրավասու մարմնին առաջարկություն կարող է ներկայացնել իր լիազորությունների իրականացման առնչությամբ՝ բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ՝ օրենքով նախատեսված դեպքերում: Նշված օրենքի 24-րդ

հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը սահմանում է, որ Հանձնաժողովն իրավասու մարմնին ներկայացնում է իր գործունեության ընթացքում վեր հանված՝ կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող հարցերի կարգավորման բացերի և թերությունների շտկմանն ուղղված առաջարկություններ:

Վերոգրյալից ելնելով և հաշվի առնելով, որ Դիմումով ներկայացված առաջարկությունները բովանդակային առումով չեն վերաբերում կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող հարցերի կարգավորմանը և Դիմումի քննարկման շրջանակներում չեն արձանագրվել բարեվարքության համակարգի տարրերին առնչվող առերևույթ խախտումների հատկանիշներ՝ Հանձնաժողովը գտնում է, որ իր լիազորություններից դուրս է Դիմումով ներկայացված առաջարկների ներկայացումն Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարին:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 30-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Գործընթաց» ՍՊ ընկերության՝ ի դեմս տնօրեն Ինարա Դանիելյանի կողմից 2026 թվականի փետրվարի 2-ին ներկայացված դիմումի հիման վրա վարույթի հարուցումը մերժել:

2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Ինարա Դանիելյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ